
ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՕԳՈՍՏՈՍ 2026



Սեմինար մասնավոր ոլորտի արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչների համար

Հայաստան. աշխատողները դեռ սպասում են դատարանի որոշման կատարմանը

Հանդիպում Սեուլի քաղաքապետարանի աշխատողների արհմիության պատվիրակության հետ

Trade union rights Armenia and workers' justice


Explore trade union rights in Armenia and the obstacles workers face regarding court order enforcement and union operations.

industriall-union / 27 авг.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



- Ողջույնի խոսք
- Սեմինար մասնավոր ոլորտի արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչների համար
- Հանդիպում Աղվերանում՝ աշխատանքային և իրավական հարցերի շուրջ
- Սեմինար ՊԵԿ-ի աշխատողների համար
- Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության այցելությունը «Գյումրիի սելեկցիոն կայան» գիտաարտադրական ՓԲԸ
- Հայաստան. աշխատողները դեռ սպասում են դատարանի որոշման կատարմանը
- Հանդիպում Սեուլի քաղաքապետարանի աշխատողների արհմիության պատվիրակության հետ



ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ՍԵՄԻՆԱՐ
ՄԱՍՆԱՎՈՐ ՈԼՈՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ





Օգոստոսի 1-2-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) և Հայաստանում Համերաշխության կենտրոնի համագործակցությամբ անցկացվել է սեմինար՝ մասնավոր ոլորտի արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:
Սեմինարի ընթացքում քննարկվել են աշխատանքային իրավունքներին, արհմիությունների իրավունքներին և երաշխիքներին, ինչպես նաև ակտիվ ու պատասխանատու արհմիութենական գործունեությանը վերաբերող իրավական և գործնական հարցեր:
Մասնակիցները ներգրավվել են խմբային աշխատանքներում, ներկայացրել են իրենց փորձն ու տեսակետները և քննարկել են արհմիությունների դերն ու նշանակությունն աշխատողների իրավունքների պաշտպանության գործում:
Սեմինարը հնարավորություն է ընձեռել ոչ միայն ձեռք բերելու նոր գիտելիքներ, այլև ամրապնդելու մասնակիցների միջև համագործակցությունն ու փորձի փոխանակումը՝ նպաստելով ուժեղ և արդյունավետ արհմիութենական շարժման զարգացմանը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՂՎԵՐԱՆՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

2026 թվականի օգոստոսի 2-ին Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունն Աղվերանի «Պարկ Ռեզորտում» կազմակերպեց հանդիպում իր անդամների և ՀԱՄԿ-ի իրավաբան Աննա Բարիկյանի մասնակցությամբ:

Հանդիպումը հնարավորություն տվեց արհմիության անդամներին անկաշկանդ բարձրաձայնել իրենց հուզող հարցերը, ներկայացնել աշխատանքային և իրավական խնդիրներն ու ստանալ մասնագիտական պարզաբանումներ:

Հանդիպումը ևս մեկ կարևոր հարթակ էր աշխատողների իրավական իրազեկվածության բարձրացման, նրանց խնդիրների քննարկման և արհմիություն-անդամներ անմիջական կապի ամրապնդման համար:











ՍԵՄԻՆԱՐ
ՊԵԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կազմակերպել է տեղեկատվական-ուսուցողական սեմինար ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ակտիվի համար:

Սեմինարի ընթացքում ճյուղային արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը ներկայացրեց արհմիությունների նպատակներն ու գործառույթները, արհմիություններին վերապահված իրավունքները, ինչպես նաև Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային արհմիության գործունեության հիմնական ուղղությունները:

Հանդիպմանը ներկա էին ՊԵԿ-ի աշխատողների արհմիության ղեկավար մարմնի ներկայացուցիչները, այդ թվում՝ արհմիության նորընտիր նախագահ Արմինե Ասրյանը:

Քննարկվեցին մասնակիցներին հուզող հարցերը, այդ թվում՝ աշխատանքային իրավունքի և սոցիալ-տնտեսական խնդիրներին վերաբերող հարցեր: ՊԵԿ-ի աշխատողները ներկայացրեցին իրենց առաջարկները արհմիության հետագա գործունեության և անելիքների վերաբերյալ:

Նման հանդիպումները կարևոր են աշխատողների իրազեկվածության բարձրացման, նրանց իրավունքների պաշտպանության և արհմիութենական գործունեության արդյունավետության ամրապնդման տեսանկյունից:

https://www.facebook.com/arhmiut/posts/pfbid03fB6nhebqPYXwLhE2UkPKE1w2S6JbDWX2z3zTC5wu67RQKBFS3kyBFMbJjCbnd1ol?locale=hy_AM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ «ԳՅՈՒՄՐԻԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ» ԳԻՏԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓԲԸ

«Գյումրիի սելեկցիոն կայան» գիտաարտադրական ՓԲԸ-ն Հայաստանի գյուղատնտեսության և սերմնաբուծության ոլորտի ամենահին ու առաջատար գիտական կենտրոններից մեկն է: Այն գտնվում է Շիրակի մարզի Ախուրյան գյուղում և առանցքային դեր ունի երկրի պարենային անվտանգության ապահովման գործում:Կայանը հիմնադրվել է 1924 թվականին: Շուրջ տաս տարի է Կայանի արհմիությունն ակտիվ դերակատարում ունի աշխատողների աշխատանքային պայմանների պատշաճ ապահովման գործում:

Օգոստոսի 21-ին Ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների այցելությունը այս անգամ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների վերաբերյալ էր: Կայացավ հանդիպում նաև ընկերության տնօրենի հետ:

https://www.facebook.com/profagro.union/posts/pfbid0tCPkj5CwM94psVSdneAMPNgcE8QCyKGgM4SRsnYfDa3ARZNJheTjJwJCz9A2eEy4l



ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԴԵՌ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆԸ



Trade union rights Armenia and workers' justice

Explore trade union rights in Armenia and the obstacles workers face regarding court order enforcement and union operations.

industriall-union / Aug 27

https://shorturl.at/p5CdC

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԵՈՒԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ



Հանդիպում Սեուլի քաղաքապետարանի աշխատողների արհմիության պատվիրակության հետ

Օգոստոսի 31-ին Սեուլի քաղաքապետարանի աշխատողների արհմիության պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ։...

hamk.am



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ
Հեռ. ՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am